ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/7» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

02.05.2018թ.
ժամը 12 ^{00}

Մասնակիցներում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության պետի տեղակալ, գնդապետ Տ. Մաթևոսյան,

Գնահատողներ՝

- ՀՀ ՋՈՒ ՍՎ ՋՏԾ հաշվառման բաժնի ավագ սպա՝ փոխգնդապետ Կ. Ավետիսյան,
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ՀՀԱ, ՋՏ և ԱՏ միջոցներով ապահովման բաժնի առաջատար մասնագետ Ն. Զախալյանը նիստից բացակայում է,
- ՀՀ ՊՆ ՌՈ ՀՕԾ բաժնի ավագ սպա, մայոր Հ. Բարսեղյան,
- ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյան,

Գնումները համակարգող՝

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի բաժնի պետի տեղակալ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Ա. Բաղրամյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Բաղրամյան)

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակցի՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Ա. Բաղրամյան)

1.1 **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/7»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին մասնակիցների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ **«ԱՍԷԴԼ» ՍՊԸ**-ի, որի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը ներկայացված է թերի, մասնավորապես՝ տեխնիկական բնութագրում նշված չէ երաշխիքի ժամկետը, հրավերով պահանջվել է մինչև 10 լիտրանոց տարաներով, իսկ վերջինս առաջարկել է 50 լիտրանոց տարաներով, նշված չէ նաև համապատասխանության սերտիֆիկատի, ապրանքի ապրանքային նշանի, արտադրողի ծագման երկրի վերաբերյալ տեղեկատվությանը:

Իսկ **«Արմես Գրուպ» ՍՊԸ**-ի կողմից սահմանված ժամկետում հրավերով պահանջվող որակավորման պահանջներին մասնակցի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը չեն ներկայացվել: Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև Կարգ) 43-րդ կետի 4-րդ մասի պահանջները որոշեց մերժել **«Արմես Գրուպ» ՍՊԸ** -ի հայտը:

Միաժամանակ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժած չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել՝ 8–րդ չափաբաժնում **«ԷՔՍՏԵՐԻԵՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ**-ին:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն:

Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկում է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

03.05.2018թ-ին գնահատող հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.

Քանի որ 1-ին տեղ զբաղեցնող մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին ծանուցումը տեխնիկական վրիպակի արդյունքում **«Արմես Գրուպ» ՍՊԸ-ն** չի ուղարկվել գնահատող հանձնաժողովը որոշեց դադարեցնել 02.05.2018թ-ի 1.1-ի ենթակետով կայացրած **«Արմես Գրուպ» ՍՊԸ** -ի հայտը մերժելու և մերժված 8-րդ չափաբաժնում **«ԷՔՍՏԵՐԻԵՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ**-ին 1-ին տեղ զբաղեցնող ճանաչելու որոշումները: Միաժամանակ գնահատող հանձնաժողովը որոշեց **«Արմես Գրուպ» ՍՊԸ**-ին՝ որպես 8–րդ չափաբաժնում 1-ին տեղ զբաղեցնող մասնակից, առաջարկել ներկայացնելու **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/7»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

11.05.2018թ-ին գնահատող հանձնաժողովը շարունակեց աշխատանքները

Գնահատող հանձնաժողովը քննարկելով **«Արմես Գրուպ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին **«Արմես Գրուպ» ՍՊԸ**-ի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը պարզեց որ վերջինիս կողմից տեխնիկական բնութագիրը ներկայացված է թերի, մասնավորապես՝ տեխնիկական բնութագրում նշված չէ համապատասխանության սերտիֆիկատի տեղեկատվությանը: Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկում է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետում **«ԱՍԷԴԼ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացվեց շտկված տարբերակները, որտեղ կրկին առկա էր անհամապատասխանություններ, մասնավորապես՝ տեխնիկական բնութագրում կրկին նշված չէր համապատասխանության սերտիֆիկատի մասին տեղեկությունը, գնահատող հանձնաժողովը Կարգի 48-րդ կետի 2-րդ մասի պահանջները որոշեց մերժել **«ԱՍԷԴԼ» ՍՊԸ**-ի հայտը: Միաժամանակ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժված չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել 11-րդ չափաբաժնում **«Վարբադ» ՍՊԸ**-ին, իսկ 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով, քանի որ **«Վարբադ» ՍՊԸ**-ի գինը գերազանցում էր սահմանված նախահաշվային գինը գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները որոշեց գների նվազեցման նպատակով 15.05.2018թ. ժամը 12 30-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել բանակցություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Բաղրամյան)

2.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 15.05.2018թ-ին ժամը 12:30-ին հրավիրված բանակցության օրը, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող, (ԳԱՊ)	Տ. Մաթևոսյան
Գնահատող,	Կ. Ավետիսյան
Գնահատող	Հ. Բարսեղյան
Գնահատող	Կ. Բրուտյան
Գնումները համակարգող՝	Ա. Բաղրամյան